Այս մտայնութեան ետին կայ տարբեր ժողովուրդներու վրայ գերիշխանութիւն հաստատած Օսմանեան կայսրութեան ստեղծած գերզգայնութեան հոգեվիճակը:

Ազգային գիտակցութեան զարթոնքին ուշացման այլ պատճառ մը կը հանդիսանայ օսմանեան կայսրերու այն կարծիքը, թէ ազգային գիտակցութեան զգացումը կրնայ կայսրութեան փլուզումը արագացնել:

Իրենց բազմազգ եւ տարբեր հողամասերու վրայ հաստատուած կայսրութիւնը հաստատ պահելու միտումով, օսմանցիները ամէն միջոցներով փորձեցին մեռցնել ժողովուրդներու ազգային գիտակցութիւնը, անոնց սովորութիւններն ու մշակոյթը:

3.- Օսմանեան կայսրութեան իշխող դասակարգը բացայայտութիւնը չէր:

«Հայրենիք եւ ազգութիւն» ըմբռնումները միշտ խորթ եղած են օսմանցի դեկավարներուն համար: Այս պատճառով է, որ Արեւմուտքի մէջ զարգացած ազգային գիտակցութեան ծլարձակումները չեն կրցած հասկցուիլ ու արժեւորուիլ պէտք եղածին պէս:

Համաշխարհային Ա. Պատերազմը իթիվհատականներուն համար պատեհ առիթ մը եղաւ իրենց թրքութիւնը զարտուղի ձեւով արտայայտելու: Այս պատերազմին ծուխերուն ընդմէջէն էր, որ ժայթքեցաւ թրքական ազգային ինքնութեան գիտակցութիւնը: Այս ուշացած գիտակցութիւնն էր, որ շատ արագ եւ մեծ յորձանքով տարածուեցաւ, հետը բերելով նաեւ այլ ազգերու նկատմամբ թշնամանք եւ ատելութիւն: 1912ին սկսեալ իրար ետեւէ սկսան ի յայտ գալ թրքամոլ կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ:

Այս կազմակերպութիւնները կը յայտարարէին, թէ ամբողջ աշխարհը պիտի դողայ իրենց բռունցքէն: Պիտի չմնայ չզարուուած բերրւ եւ չծնած բունները:

4.- Իրականութեան մէջ թրքութիւնը շատ ալ բաղձալի ընտրութիւն մը չէր, որովհետեւ թուրք բառը մարդոց վարկաբեկելու համար հայհոյանքի տեղ գործածուող բառ մը եղած է: 1875ին «Պաշիւրէթ» օրաթերթը կը գրէր, թէ կային երիտասարդներ, որոնք կ'ամչնային իրենց թրքութեամբ:

5.- Ազգային գիտակցութեան զբաւոյնը միտումնաբար զրոյացուցանելու համար 19րդ դարուն տարուիներն տեսութեան վրայ հիմնուած ցեղապաշտութեան գաղափարախօսութիւնը օգտագործուեցաւ երկար ատենէ ի վեր իբրեւ հայհոյանք գործածուող թՈՒՐԳՈՒԹԻՒՆԸ:

19րդ դարուն տարուիներն տեսութեան վրայ հիմնուած ցեղապաշտութեան գաղափարախօսութիւնը օգտագործուեցաւ երկար ատենէ ի վեր իբրեւ հայհոյանք գործածուող թՈՒՐԳՈՒԹԻՒՆԸ:

Բ.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՒԻ ՀԵՏԵՒԱՆՔ ՍՏՈՐԱՅՈՒՄԻ

Այս գիտակցութիւնը հանդիսացաւ վարկաբեկումի հետեւանքներէն մէկը: Երբ Օսմանեան կայսրութիւնը շատ զօր էր, օսմանցիները չէին գիտեր, թէ իրենք թուրքերն են: Երբ այս բարձունքէն վար ինկան, եւ թաղուեցան մինչեւ

իրենց բերանները ստորնացումի զգացումներուն տիրմին մէջ, զգացին իրենց թրքութիւնը: Թրքութիւնը թուրքերուն համար անճար վիճակ մըն է, պարզապէս փախուստի միջոց մըն է այն անփախելի ստորնացումի իրականութենէն:

Օսմանեան պետութեան մէջ թուրք կը նշանակէր՝
 - Խարդախ
 - Որսի շուկ
 - Գիւրացի եւ ցած մակարդակ ունեցող
 - Տգեղ
 - Անհաւանութիւն չունեցող:

Օսմանցիներուն մօտ այս թրքատեացութիւնը կարելի է հետեւեալ պատճառներով հիմնաւորել.
 ա) Օսմանցիները, հաւաքելով քրիստոնեայ մանուկները՝ զանոնք կը մեծցնէին մասնաւոր կրթութեամբ եւ ուսումով: Ասոնք ապագային պիտի գրաւէին պետական բարձր պաշտօնները: այս դասակարգը լաւ աչքով չէր նայեր թուրքերուն: Այս մտայնութեամբ մեծցած ու բարձր պաշտօններու վրայ գտնուող այս խաւը, Օսմանեան կայսրութեան տկարացման պատճառ նկատեց թրքութիւնը:

բ.- Լենկթիմուրի յաղթանակը
 1402ին թուրք խմբակները միանայով Լենկթիմուրի բանակին՝ պարտութեան մատնած էին Օսմանեան պետութիւնը: Օսմանցիները այսպիսով թուրքերուն հետ անվստահութեամբ կը վարուէին:

գ.- Արաբ - իսլամ գիտութիւնը
 Օսմանցիներուն մօտ եղած հակաթուրք այս կեցուածքին ետին կար նաեւ օսմանեան դպրոցներուն մէջ թուրքերը վարկաբեկող, զանոնք ստորին ու դուրսեան նկատուող դաստիարակութիւն մը: Արաբ - իսլամ աշխարհին մէջ, թուրքերը կը նկատուէին Մարդուութեան թշնամի, վայրենի, գազաններու վոհմակ եւ մարդկութեան գլխուկ մեծ փորձանք:

դ.- Ալեւի թուրքմէն ըմբոստացումները
 Ամբողջ Օսմանեան պատմութեան ընթացքին նկատուած են Ալեւի թուրքմէն ըմբոստացումներ: Այս ըմբոստութիւնները գլխաւորաբար կը կազմակերպուէին աշիրէթներու առաջնորդներուն կողմէ:

Այս թրքատեացութիւնը նաեւ տեղ գտած է Օսմանեան կայսրութեան սահմաններէն դուրս. Հազարաւոր գրութիւններ կարելի է մէջբերել, ուր կ'ըսուի, թէ՝ «Թուրքերը պէտք է Եւրոպայէն վաճուել, որովհետեւ անոնք ոտնակոխ ըրին եւ փճացուցին ամբողջ եւրոպական մշակոյթը: Պէտք է անոնք ետ դրկուին իրենց եկած վայրերը»:

Թուրքերու վարկաբեկումէն աւելի կարեւոր է այս իրականութեան անոնց գիտակից ըլլալն է: Իրբեք առաջին քայլ, Երիտասարդ Թուրքերը, 19րդ դարու սկիզբը, փորձեցին յեղաշրջել Եւրոպայի իրենց հանդէպ ունեցած նախապաշարումները: Արեւմուտքի մէջ կազմուած հակաթուրք պատկերը յեղաշրջելը նաեւ առաջին գործը եղաւ «Փրկութեան պատերազմ»ը կազմակերպող առաջնորդներուն: 1917ին, դաշնակից պետութիւններն անգամ թուրքերու վայրենիութիւնը կ'օժտագործէին իրենց յետին նպատակներուն համար: Անոնք կ'ըսէին, թէ կ'ուզեն ազատել թուրքերու արխանտ ճիւղներուն մէջ տապալակող թշուառ ժողովուրդները, եւ Եւրոպայէն վաճուել այս վայրենիները: 1914ին Անգլիոյ օրուան վարչապետը մայս ոճով կը խօսի՝ «մարդկութեան այս քաղցկեղը»: Չափազանցած չենք ըլլար, երբ ըսենք, թէ Եւրոպայի այս մօտեցումը մեծ դեր խաղացած է «Փրկութեան պատերազմի» ճակատագիրի որոշման մէջ:

1911ին, Թարպուս Լարպի պատերազմին Իթթիհատական էնվէր փաշան ըսած է. «այնպէս մը վարուիմք, որ Արեւմուտքը գիտնայ, թէ մենք իրենց կարծած բարբարոս ազգը չենք»:

Չանգուածային չափազանցուած եւ անտեղի վախ մըն էր, որ կը տիրէր:

«Չհասկցուեցաւ, կամ ալ սխալ հասկցուած ըլլալու, առանձին մնալու վախը» պիտի որոշէր ապագային առնուելիք քայլերը:

Գ.- ԹՈՒՐԳԵՐԸ ԻՐԵՒԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՏԵՂՈՒՄԸ ԱՉ

Իր պատմութեան ընթացքին այս աստիճանի ոտնակոխուած ու վարկաբեկուող ժողովուրդ մը, բնականաբար, պիտի փորձէր իր դէմ ըսածներուն հակառակը փաստել: Ասոր համար է, որ թուրքերը ջանք չխնայեցին փաստելու համար, թէ թուրք ցեղը հարուստ մշակոյթի տէր եւ աշխարհի մշակոյթներուն եւ լեզուներուն հիմնադիրները թուրքերը եղած են: Կարգ մը ցեղեր՝ իշխելու, իսկ ոմանք իշխուելու համար ծնած են: Թուրքը այս առաջին խուճրիկը պատկանի: Թուրքերն էին, որոնք միտեցող կրցան պահել Օսմանեան կայսրութեան ենթակայ տարբեր ազգերը:

Գ.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՐՍԵՒՆՈՒ ԵՒ ԲՆԱՋՆՁՈՒՆՈՒՄԸ ՎԱՅԵՆ ԾՆԱՒ

Օսմանցիները իրենց կայսրութեան վերջին դարը անցուցին փլուզումի վայրով: 19րդ դարուն ծնած Արեւմեան Հարցը, որ ամբողջ Եւրոպան երկար ժամանակ զբաղեցուց, զազուրկ սիրական ուժերուն կողմէ կայսրութեան բաժանման ծրագիրն էր: «Հիւանդ մարդը» պիտի չարունակէր ապրիլ մինչեւ այն ատեն, որ մեծ

ուժերը չեն համաձայնած: Օսմանցիները ապրեցան իրենց կայսրութեան ապագան ոչ թէ իրեն, այլ դաշնակից պետութիւններէն կախեալ ըլլալու գիտակցութեամբ: 1895ին, Անգլիոյ վարչապետ Սալզբորի՝ Սալիտ Հալիմ Փաշային գրած է. «Արդարեւ, Իւրաքանչիւր անցնող օր աւելի կը փաստէ, թէ Օսմանեան կայսրութեան դոյատեւումը կախեալ է մեր եւ Ռուսիոյ անհամաձայնութենէն: Երբ կարենանք համաձայնիլ, այն ատեն ձեր կայսրութիւնը կը փլի»: Շատ հետաքրքրական է, որ երբ Ռէվալի (ներկայիս՝ Էսթոնիոյ մայրաքաղաք Թալին) մէջ անգլիացի եւ ռուս պետական մարդիկ հանդիպեցան 8էն 9 Յունիս 1908ին, այս հանդիպումը Պոլսոյ մէջ մեկնաբանուեցաւ իբրեւ կայսրութեան բաժանման հանդիպում: Ռէվալի այս ժողովն էր, որ Երիտասարդ Թուրքերուն ըմբոստանալուն ազդանշանը եղաւ: Էնվէրներուն եւ Նիագիններուն լեռներ ելլելու պատճառը բաժնուելու եւ կործանման անխուսափելիութեան իշխող ոգին էր: Եւ Երիտասարդ Թուրքերը 1908ին յայտարարեցին, թէ բժշկած են «հիւանդ մարդը»:

Սակայն, 1908ին յայտարարուած այս «ՄԵՇ-ՐՈՒԻՆԹ»-ը չկրցաւ արգիլել կայսրութեան կործանումը եւ փրկել հիւանդ մարդը: Ընդհակառակը՝ արագացուց անոր մահը: Թուրք ազգային գիտակցութիւնը իր ապագայի եւ ներկայի գոյատեւան վախովն է, որ դրսեւորուած է: Այս է գլխաւոր պատճառը, թէ ինչո՞ւ համար Եւրոպայի կողմէ որեւէ առաջարկ նկատուած է իբրեւ քրիստոնեաներու կողմէ ներքին հարցերու միջամուխ ըլլալ: Կայսրութեան բաժանման գլխաւոր պատասխանատու նկատուեցաւ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ աշխարհը:

Ե.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՒԹՅԱՆ ԴԵՄ ԹՇՆԱՄԱՆՔԸ

Քրիստոնեայ փոքրամասնութիւններ՝ Ֆրանսական յեղափոխութենէն ազդուած, անկախութեան պատերազմ մղելով յաջողութեամբ անկախացան: Եւ այս անկախացումները իբրեւ դաւարութիւն եւ ապերախութիւն նկատուեցան օսմանցիներուն կողմէ: Այս ըմբոստացումները կարճ ժամանակի ընթացքին ստացան կրօնական բնոյթ: Այսպիսով, կուրբ դուրս եկաւ Օսմանեան պետութեան եւ անկախութիւն պահանջող Ազգերու բնոյթէն եւ տարբեր կրօններու ու ցեղերու միջեւ ճակատամարտը վերածուեցաւ:

Կայսրութեան հպատակ քրիստոնեաները տարբեր պետութիւններու միջամտութեամբ, ձեռք անցուցին այնպիսի իրաւաստութիւններ, որոնցմէ զուրկ էին իսլամները: Քրիստոնեաներուն նկատմամբ այս ատելութեան զգացումները սկսած էին նախքան «Թանգիմաթ»ը, եւ իրենց զազաթնակէտին հասան՝ «Թանգիմաթ»ով:

Եւրոպական պետութիւնները քրիստոնեաներուն հետ կը վարուէին իբրեւ իրենց հպատակներ: Մինչեւ իսկ անոնց հպատակութիւն եւ անցազիր կու տային: Տակաւին երէկուան այս հպատակ քրիստոնեայ փոքրամասնութիւնը, այսօր ո՛չ թէ իսլամներուն հետ կը հաւասարէր, այլ՝ անոնցմէ շատ աւելի լաւ պայմաններու մէջ կ'ապրէր:

Նոր օսմանցիները կամ իթիվհատականները, իբրեւ իսլամներուն պաշտպանները, որպէսզի կարենան իրենց թրքութեան ինքնութիւնը պահել, ատելութեան ոգի սնուցեցին քրիստոնեաներուն նկատմամբ:

Արդե՞նք. քրիստոնեաներուն նկատմամբ ծնաւ ծայրայեղ իսլամական շարժում մը, որ կարելի է նշմարել մինչեւ օրս:

Զ.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՓԱՍՏՈՒՄ ԵՒ ԲՆԱՋՆՁՈՒՆՈՒՄԸ ԶԵՏ ԽԱՂԱՆՈՒ ԾՆՇՈՒՄՆԵՐ

Քրիստոնեայ փոքրամասնութիւններու ընկերային բարեկարգումներու սահմաններուն մէջ սկսած պահանջները, կեդրոնական իշխանութեան դիրքի կարծրացումին եւ եւրոպական պետութիւններուն աւելի զօրաւոր միջամտութեան պատճառով յանգեցան շատ մը անկախ պետութիւններու կազմութեան: Հետեւեալը, որեւէ բարեկարգումներու առաջարկ սկսաւ նկատուիլ իբրեւ կայսրութեան բաժանումի նախաքայլը:

Արեւմուտքը բնաւ առիթ չէ կորսնցուցած վարկաբեկելու օսմանցիներուն արժանապատուութիւնը: Հետեւեալը, արեւմտեան երկիրներուն դէմ իրենք զիրենք անզօր նկատող թուրքեր՝ իրենց մէջ կուտակուած այս ատելութիւնը պարպեւ Օսման փորձեցին գտնել աւելի տկար ուժեր: Այդ տկար ուժերը իրենց սահմաններուն մէջ ապրող քրիստոնեաները հանդիսացան: Վարկաբեկուած ազգի մը այս աստիճանի յարձակողապաշտ ըլլալու ետին կայ նաեւ իր անցեալի մեծութեան յիշողութիւնը:

Թուրքերը իրենք զիրենք այնքան բարձր կը զգային, որ օտար լեզու սորվիլն իսկ ամօթ կը նկատէին: 19րդ դա-

րուն, երբ Եւրոպայի գերակայութիւնը ակնյայտ էր: Օսմանցիները անոնց կը նայէին հիացումով, եւ սակայն երբեք չեն սիրած զիրենք: Ի՞նչպէս սիրէին, երբ միշտ յաղթուած են, եւ քաղաքական բեմի վրայ միշտ վարկաբեկուած՝ անոնց կողմէ:

Յարատեւ պարտութիւնները եւ հողային կորուստները պատճառ դարձան, որ անոնք փորձեն վերադառնալ իրենց փառաւոր անցեալին: Այս բոլորը պատճառ եղան, որ թուրք ազգային գիտակցութիւնը միտի վայրենիութեան եւ ջարդեր:

Է.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ. ԻՍԼԱՄՆԵՐՈՒ ՋԱՐԳԸ ԵՒ ԿՈՐՍՈՒՄԸ ՀՈՂԵՐԸ

Թուրք ազգային ինքնութիւնը զարգացած է պարտութիւններու, ջարդուած իսլամներու եւ հողային կորուստներու պարտադրած վրիժառութեան զգացումներով: 1840էն ետք, Եւրոպայի անկախացած քրիստոնեայ երկիրներէն: 1877 - 1878ին Ռուսիայէն եւ 1912ին Պալքաններու ջարդէն ազատած բազմաթիւ իսլամներ փախուստ տուին:

Հազար ու մէկ նեղութիւններով Անատոլու հասած այս զաղթականները՝ իրենց գոյութիւնը եւ անցեալը վառ պահելու համար, հիմնեցին ակումբներ եւ միութիւններ:

Այս մարդիկը ոչ թէ լոկ ջարդերէն փրկուածներ էին, այլ՝ Անատոլուի մէջ ջարդուելիք, գլխաւորաբար հայերուն՝ կամաւոր դահիճները:

Ը.- ԹՈՒՐԲ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԹԵ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻ ԴԵՄ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԻԱՅՈՒՄ

Թրքութեան գիտակցութիւնը զարգացաւ նաեւ այնպիսի ժամանակամիջոցի մը, երբ կայսրութեան քրիստոնեաները կը նկատուէին իբրեւ ներքին, իսկ Արեւմուտքի միացեալ ճակատը՝ իբրեւ արտաքին թշնամիներ: Հսկայ կայսրութիւն մը՝ իբրեւ աւազէ ժամացոյց կը հայէր ու կ'ոչընչանար: Ընեւիթ ոչինչ կար: Իշխանութեան մօտ սկսաւ գոյանալ «շատը գնաց քիչը մնաց»ի հոգեբանութիւնը:

«Ես - դուն չկայ, այլ կայ մենք»ի մամն լուրուելներով սկսաւ ծնիլ թրքական ինքնագիտութիւնը: Մէկ կողմէ յարատեւ հող կորսնցնող, սահմանները նեղցող, բաժնուելու եւ ոչնչացնելու սեմին հասած կայսրութեան անդամները, իրենց վախի հոգեբանական վիճակը, միւս կողմէ՝ քրիստոնեայ փոքրամասնութեան ազգային պահանջները նկատուեցան կայսրութեան բնաջնդումի գլխաւոր ազդակներ: Կայսրութիւնը պահելու համար թուրքերը դիմեցին նոյնիսկ ամէնէն խիստ միջոցներուն:

ԱՆՋՐՊԵՏԱՅԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ...

Շարունակում՝ 7րդ էջէն

Նկատի ունենալով, որ անոնք մրցակցութիւն չեն դիմագրաւած, հոյամոռի գէտները ազատօրէն վերածուած են հակներու:

Նիւ Եորքի Բոլիւմպիա համալսարանին մասնագէտներէն Փոլ Օլսոնի համաձայն, անոնք փոխարինած են բազմաթիւ տարբեր տեսակի մասկերներ, որոնք մեծամասնութեամբ կապ ունին ներկայիս պարող կոկորդիլոսներու:

Օլսոն եւ անոր խմբակը եզրակացուցած են, որ հոյամոռիները հազիւ 50

հազար տարի անհրաժեշտ եղած է մեծնալ եւ շատ մեծնալ սկսելու համար: Ժիւրասիքէն առաջ, մեծագոյն հոյամոռիները հաւանաբար փլաթեւորուած նման երկար վիզով, երկուտանից մեթր երկայնքով բուսակեր մըն էր:

Աւելի ուշ, քիրանոսորուի նման հակայ մասկերներու երկայնքը 12,5 մեթրի եւ աւելիի հասած է: Նախապէս տեղի ունեցած բախումի մը գծով կենսական փաստը կու գայ հազուադէպ մետաղէ մը՝ իրիտիոմէ, որ աս-

տեղակերպերու մէջ մեծ համեմատութեամբ կը գտնուի:

Տակաւին չէ գտնուած սակայն այն խոռոչը, որ ստեղծուած պէտք է ըլլայ իրեն արդիւնքալո առաջին բախումին: Օլսոն կ'ըսէ, որ թեկնածուներ կան Քանաթի եւ Աւստրալիոյ մէջ,

նշելով, որ 15 տարի անհրաժեշտ եղած է եուրաթանի մէջ գտնելու համար 65 միլիոն տարուան խոռոչը:

Բազմաթիւ գիտնականներ յաւելեալ փաստեր կ'ուզեն, ինչ կը վերաբերի առաջին բախումին:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուի սակարահին մէջ օտար դրամացիներու փակման սակագները հետեւեալներն են:

Սուրիական թղթուկի	32,50 - 32,60	լ.ն.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00	լ.ն.
Քուէյթեան տինար	5045,00 - 5070,00	լ.ն.
Յորդանանեան տինար	2116,00 - 2126,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,50 - 412,50	լ.ն.
Քաթարեան ռիալ	413,50 - 415,50	լ.ն.
Սէուտական ռիալ	401,70 - 403,70	լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կինէ	249,00 - 259,00	լ.ն.
Անգլիական սթերլին	2467,00 - 2477,00	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1163,00 - 1168,00	լ.ն.
Թրքական լիրա	103,00 - 103,50	լ.ն.
Կիպրական փաուստ	3020,00 - 3045,00	լ.ն.
Ճապոնական հապար եէն	12,75 - 12,85	լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	13,20 - 13,25	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1090,00 - 1095,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	988,00 - 993,00	լ.ն.
Եւրո	1779,00 - 1789,00	լ.ն.

● ՈՍԿԻ		
Անգլիական մէկ ոսկի	143,000 - 148,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	128,500 - 133,500	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	119,000 - 124,000	լ.ն.
Մեքսիկական փէսոս	683,000 - 703,000	լ.ն.

Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի	17,820,000 - 18,020,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	370,00 - 370,50	Տ
Մէկ օսն արծաթ	4,66 - 4,68	Տ


● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը:	
Եւրո	1.1810 - 1.1815
Քանադական տոլար	1.3784 - 1.3794
Չուիցերիական ֆրանք	1.2918 - 1.2928
Ճապոնական եէն	117.27 - 117.31
Մէկ սթերլին	1.6381 - 1.6391

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում	Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 6/8	4 7/8
Բ. կարգ	4 6/8	4 6/8

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ԵԿԵՔ ՇԱՐԱԴՐՆԵՐ



Կը սիրեն պատմութիւններ հնարել, երեւակայութիւնը աշխատցնել, շարադրել...

Մ ա ս ն ա կ ց է՝ «Պլտիկ-Մպտիկ»ի շարադրութեան մրցումին:

Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

Վրձանագրութիւնները տեղի կ'ունենան 9 Մայիսին 27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիւին, երկուշաբթին Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

Մրցումը տեղի պիտի ունենայ կիրակի, 1 Յունիսին, «Յ. Տէր Մերոնեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:

Բոլոր մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 9:30ին:

Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրենական պիտոյքները:

Ուրբաթնիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արժեքատր նուէրներ:

Արդիւնքները պիտի յայտարարուին «Պլտիկ-Մպտիկ»ի Ուրբաթ 20 Յունիսի թիւով:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5446 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- | | |
|--|--|
| ՇՈՒԻՆՆԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱՅԵԱՑ |
| 1. Գովուան, մեծխօսիկ: | 1. Յիսուսի աշակերտներէն - Տիգրան Օտեանի գրչանունը: |
| 2. Նմանապէս այլ բաներ - Ողորմիբ: | 2. Պաշար, պարէն: |
| 3. Կրկնուած գիրեր - Պահեցողութիւն - Ուրբաթ: | 3. Այբուբենէն - Պատկերազարդ: |
| 4. Աստուած - Արական անուն: | 4. Հեռու, մեկուսի - Լծորդութիւն: |
| 5. Բաժնիքի երկերէն՝ «... Աքաղաղ» - Որոշուած գին: | 5. Հոմանի - Վէճի կոնակ: |
| 6. Խորհրդային վատահամբաւ բանակալ - Օտար տղայ: | 6. Անբաժին, զուրկ - Հ.Մ.Ը.Մ.ական նախկին մամուլէն: |
| 7. Յոգնակերտ մասնիկ - Յորդոր: | 7. Տառի մը անունը - Մողէց: |
| 8. Բարուքիլ - Չայնանիչ: | 8. Շահաւէտ, պիտանի: |
| 9. Յրանսական գետ - Որսի կենդանի - Ածակահնակերտ մասնիկ: | 9. Զիւլ ծածկոց - Մոն-կոլ կրօնաւոր: |
| 10. Դեհ - Մագուլ: | 10. Տնկելի ճիւղ - Յոփակեաց: |

ԹԻՒ 5445

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՍԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Խ	Ք	Ա	Ն	Կ	Ա	Ղ	Գ	
2	Ն	Ա	Ե	Ի	Կ	Տ	Ո	Ի	Ր
3	Ա	Կ	Ռ	Ա	Ս	Ե	Կ	Ա	
4	Մ	Ա	Ն	Ս	Կ	Ն	Ո	Ր	Ս
5	Ա	Ն	Ա	Ս	Ա	Կ	Մ	Ա	Ս
6	Խ	Կ	Պ	Ո	Պ	Մ			
7	Օ	Ր	Ի	Ն	Ա	Ո	Ր	Ս	
8	Ս	Ե	Ր	Ի	Ն	Ա	Ս	Ս	
9	Ս	Մ	Ե	Լ	Ա	Ն	Ի	Կ	
10	Ս	Ա	Ն	Տ	Ր	Ա	Ս	Ր	

★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ) Զեր ծրագրներէն մէկը կը յառաջանայ մեծ քայլերով: Նոյնիսկ ասիկա անակնկալ մը պիտի ըլլայ ձեզի համար: Ուրախ տրամադրութեամբ պիտի անցնի ձեր օրը:

★ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Պիտի շրջանցէք բոլոր դժուարութիւնները, առանց զգալու: Օրուան լաւ պատահարները բախտաւորութիւնն են կատեցէք: Հանգարտ մնացէք աշխատանքի պահուն:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Առանձին կ'աշխատիք, ոչ ոքի օգնութեան կը դիմէք: Զեր ուզեք, որ յետեւ մէկը միջամուտի ըլլայ ձեր ծրագրներուն կիրարկման: Լաւ կ'ընէք:

★ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Նախքան որոշում մը տալը, լաւ մտածեցէք, որովհետեւ ձեզմէ ետք կարելի պիտի չըլլայ նոյն աշխատանքը յանձնել այլ անձի մը: Գիտցէք ձեր կարողութեան արժեքը:

★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Եթէ հարցի մը մասին պայմանաժամ մը դրուի, բնու մի անպարէք, ընդունեցէք այդ համաձայնութիւնը, որովհետեւ ժամանակը պիտի յառաջանայ ի նպաստ ձեզի:

★ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Տնտեսական ձեր կացութիւնը լաւ վիճակի մէջ է, որովհետեւ վարպետի մը նման կը տնտեսէք ձեր գործերը: Զեր տնտեսական վիճակը հաստատ վիճակի մէջ է:

★ **ԿՇԻՌԻ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Զեր բոլոր աշխատանքները յաջողութեամբ պիտի պակուիցնալաւ: Ինչ որ ծրագրած էք, պիտի աւարտէք յաջողութեամբ: Օրը բարի է:

★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Գործեր կան, գորս կը կատարէք միայն ստիպողական պարագայի, ու այդ ալ եթէ ուզեք կատարել: Այսօր թիչ մը բնայրտ պիտի ըլլաք: Սթափեցէք:

★ **ԱՆԵՆՆԱՌՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Զեր շուրջը կան ժպտուած անձեր, բայց այսօր բնաւ պիտի չազդուիք անոնց ժպտներէն: Այսուհանդերձ բարեկամաբար պատրաստեցէք ձեր ծրագրները:

★ **ԱՅԾԵՆԶԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Այսօր եղբէր ժուկալ, պարարտ ճաշերէ հետեւ մնացէք, որովհետեւ անոնք կրնան վնասել ձեր ստամոքսին: Նոյնպէս հետեւ կեցէք շատախօս անձերէ:

★ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Փոքր ճամբորդութիւն մը պիտի օգնէ ձեզի գուարանալու, խաղաղ վայրի մը մէջ: Ընդունեցէք այս հրաւերը, որ օգտակար պիտի ըլլայ:

★ **ԶՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Օրը շատ յարմար է համաձայնագիր մը ստորագրելու, կամ՝ որեւէ այլ կարգի գործունեութիւն մը կատարելու ընկերովի: Դրամական շահ մը ապահով է այսօր:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒԱՍՏՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՈՍԱՆԵՐԶՈՒԹԻՒՆ

ՌՈՉ ՀԻՒՍԵՅՆԻԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՈՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ



Ռոչ Հիւսէյնի գործերէն օրինակ մը:

Լիբանանցի գեղանկարիչ Ռոչ Հիւսէյնի «Ժանիի Ռուպէյ» արուեստի ցուցասրահին մէջ 21 Մայիսէն մինչեւ 11 Յունիս հանրութեան կը ներկայացնէ 1998էն ի վեր իր աշխատանքին արդիւնքը եղող գեղանկարներու անխորագիր հաւաքածոյ մը, որ կը բաղկանայ քսանէօթը իւղանկարներէ:

Անհատական թէ հաւաքական բազմաթիւ ցուցահանդէսներով հանդէս եկած Ռոչ Հիւսէյնիի գործերը կը պատկանին վերապաշտ դարոցին: Անոնք կը յատկանշուին յստակութեամբ ու դիտողի կը փոխանցեն հանդարտութեան ու կայմակերպութեան մթնոլորտ մը: Մեծ է թիւը այն իւղանկարներուն, որոնց մէջ, որոնց տարածքին մեծ մասը՝ ընդհանրապէս ենթահողը, կը պարզէ խաղաղ ու մեղմ գոյներու, երանգներու տարածած համադրում մը, իսկ անոնց կեդրոնը տեղ գտած են ենթահողին ամբողջութեամբ հակադրութեան տպաւորու-

թիւնը: Վերոյիշեալ գեղանկարներու շարքին կը հակադրուին Ռոչ Հիւսէյնիի այն գործերը, որոնք ամբողջութեամբ կը բաղկանան իրարու վրայ կուտակուած վատ պատկերներու հակադրութիւններով արտայայտուող վերապահ ձեւերէ:



Ռոչ Հիւսէյնիի երանգապայմանը հարուստ է ձեւապատկերով, մոխրագոյնի ու բաց կապուտի երանգներով, որոնց դիմաց նոյնքան առատօրէն օգտագործուած են մութ կանաչը, կապուտը, վառ կարմիրն ու նարնջագոյնը: Այս ցուցահանդէսը կարելի է այ-

ցելի երեքշաբթիէն Շաբաթ օրերը, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

ՕՐԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՎԱՆԻ, 27 ՄԱՅԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ՝ 27°C

ԳԻՇԵՐ՝ 18°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 68%

ԱՉԳԱԿ 50 ՏԱՐԻ ԿՈՒՄԱՐ

29 Հոկտ. 1952

ԱՅՁԸՆԱՌՈՒՐ ԵՒ ԸԱՅԵՐԸ ԹԻԿՆԱՊԱՀԸ ԵՒ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻՆ ՀԱՅԵՐ ԵՂԱՍ ԵՆ



Հայեր էին Այզընհաուերի թիկնապահը եւ քարտուղարուհին Բ. Աշխարհամարտի ժամանակ: Գրիգոր Գրիգորեան նշանակուած էր թիկնապահ եւ մէկը էր այն վեց զինուորներէն, որոնց միայն յայտնի էր վայրը, ուր դաշնակից բանակի հրամանատարները 1942ին ժողով պիտի գումարէին եւ Նորմանտիա գինուոր ցամաք հանելու ծրագիրը պատրաստէին:

ԱՅՍՕՐ՝ 27 ՄԱՅԻՍԻՆ

- 1907 .- Մահ ժողովրդական հերոս Գեորգ Գալուշի (Սուլուխի կռիւ):
- 1950.- Պաշտօնական բացում «Նշան Փալանձեան» ճեմարանի նոր շէնքի՝ ի ներկայութեան Լիբանանի համապետութեան նախագահ Պաշա Է. Խուրիի, վարչապետ Ռիատ Սուլիի եւ նախարարներու:
- 1976.- Փարիզի Էայ Մշակոյթի Տան ղեկավարում:
- 1989.- Կայստանի մէջ պաշտօնական ճանաչում Մայիս 28ի եւ Եռագոյնի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼԻՔԱՆԱՆԻ ԱՐԵՎԻԶՄԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. ՇԱՀԵՅԱԻ 2 ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ, 1 ԵՐԿՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ 3 ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբաթավերջին տեղի ունեցան Լիբանանի աթլետիկայի ախոյեանութեան մրցումները՝ երկու դասակարգերու մէջ, միջակ (14-15 տարեկան) եւ փոքր (13 տարեկան) եւ վար: Հ. Մ. Ը. Մ. իր մասնակցութիւնը բերաւ իր երեք մասնակցութեամբ՝ Պէյրութ, Պուրճ Լա-ժաժա եւ Ժնեւ:

Միջակ տղոց եւ աղջկանց մրցումներուն, Յովհաննէս Շիրիաք երեքբայլ ռստումի մէջ հանդիսացաւ առաջին (11,20 մ.), իսկ մէկ բայլ ռստումի մէջ Ժերար Կիւլիկեան՝ երրորդ (5 մ.):

Տղոց զբօշարչակի խումբը (Ժերար Կիւլիկեան, Ճոնի Շիրիաք, Կիրո Գարավարդանեան եւ Ճորճ Ֆեթուլահեան) հանդիսացաւ առաջին, իսկ 80 մետր վազքի մրցումներուն Ճորճ Ֆեթուլահեան՝ երրորդ:

Փոքր տղոց եւ աղջկանց մրցումներուն, բարձրութիւն ցատկելու մէջ Լուի Չափարեան հանդիսացաւ երկրորդ (1,20 մ.), իսկ Հրակ Արէշեան՝ երրորդ (դարձեալ բարձրութիւն ցատկել):

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԵԱԼ ՍՈՍԻԵՏԱՏ - ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան 35րդ հանգրուանի մրցումներուն, Տեփորթիւօ Քորուանյի կրած պարտութիւնը պատճառ դարձաւ, որ տիտղոսի տիրանալու համար մրցակցութիւնը այժմ տեղի ունենայ Ռէալ Սոսիետատի եւ Ռէալ Մատրիտի միջեւ, որոնք շաբաթավերջին յաղթանակներ արձանագրելով, իրենց միջեւ տեղի ունեցած մէկ կէտի տարբերութիւնը պահպանելու նոյնը: Լա Քորուանայ յաջողութեամբ կը մնայ Սոսիետատին:

2002-2003 եղանակի ախոյեանութեան աւարտին այժմ մնացած է երեք հանգրուան միայն:

Ստորեւ՝ 35րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Էսփանիոլ - Ալաւես	3-1
Մալորքա - Սելիլլա	1-3
Ռեքրեաթիւօ Զուլեվա - Պարսելունա	1-3
Ռեալ Պեթիս - Ռեալ Վալադոլիտ	2-2
Մալախ - Ռեալ Սոսիետատ	0-2
Աթլետիքո Պիլաո - Ռասիլ Եւրոպա	2-1
Աթլետիքո Մատրիտ - Վիարեալ	3-2
Սելթա Վիլո - Տեփորթիւօ Քորուան	3-0
Ռախո Վալեքանո - Օսասունա	0-0
Վալենսիա - Ռեալ Մատրիտ	1-2

ԴԱՍԱԿՈՐՈՒՄ

1.- Ռէալ Սոսիետատ	45
2.- Ռէալ Մատրիտ	72
3.- Տեփորթիւօ Զորուան	71
4.- Սելթա Վիլո	66
5.- Վալենսիա	57
	56

ՊԱՏԵՐՊՈՒ

Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՐԿՐՈՒ ԽՈՒՄԲԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ



1986-87ի ծնունդ խումբը

Անցեալ շաբաթավերջին վերջ գտան Լիբանանի պատկերասրահի տարիքային ախոյեանութեան մրցումները: Հ. Մ. Ը. Մ. Անթիլիասի աղջկանց երկու խումբերը՝



1988-89-90ի ծնունդ խումբը

1986-87ի ծնունդ եւ 1988-89-90ի ծնունդ կազմերը, թէեւ հասան աւարտական հանգրուան, սակայն չկրցան տիտղոսներու տիրանալ, յաջորդաբար պարտուել էնք Անդրանիկէն (73-62) եւ Ռիտի Պէյրութէն (65-60):

ԲԱՆԻՈՅ

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ ՓՈՒԱԴՐՈՒՈՂ ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲԸ՝ ՅԱՐԴ ԱՆՈՐՈՇ

Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիօ) 34րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, հակառակ անոր որ Աթալանթա եւ Ռեճինա յաղթանակներ արձանագրեցին, սակայն ցարդ յստակ չեղաւ թէ անոնցմէ ո՞ր խումբը պիտի հանդիսանայ չորրորդ խումբը, որ Փիաչենցա-յի, Քոմոյի եւ Թորինոյի հետ պիտի փոխադրուի Բ. դասակարգ: Անոնք երկուք իրարու հետ վիճակի մրցումներ պիտի կատարեն, որմէ ետք պիտի յստականայ թէ անոնցմէ ո՞ր մէկը պիտի փոխադրուի Բ. դասակարգ:

Առաջին չորս դիրքերը գրաւող խումբերը՝ Եուվեթուս, Ինթեր Միլան, Ա. Սէ. Միլան եւ Լացիօ Ռոմա, յառաջիկայ եղանակին պիտի մասնակցին «Չէմփիօն» Լիգի ֆուտպոլի մրցաշարին, իսկ Ա. Էս. Ռոմա, Փարմա եւ Ուտինեզէ՝ Եու. Է. Է. Բ. ֆուտպոլի մրցաշարին:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պոլոնիա - Ռեճինա	0-2
Պրեշիա - Մոտենա	2-2
Քոմո - Թորինո	1-0
Էմփոլի - Փարմա	0-2
Ինթեր Միլան - Փերուճիա	2-2
Եուվեթուս - Քիեո	4-3
Փիաչենցա - Ա. Սէ. Միլան	4-2
Ա. Էս. Ռոմա - Աթալանթա	1-2
Ուտինեզէ - Լացիօ Ռոմա	2-1

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը:

1.- Եուվեթուս	72 (64 - 29)
2.- Ինթեր Միլան	65 (64 - 38)
3.- Ա. Սէ. Միլան	61 (55 - 30)
4.- Լացիօ Ռոմա	60 (57 - 32)
5.- Փարմա	56 (55 - 36)
6.- Ուտինեզէ	56 (38 - 35)
7.- Քիեո	55 (51 - 39)
8.- Ա. Էս. Ռոմա	49 (55 - 46)
9.- Պրեշիա	42 (36 - 38)
10.- Փերուճիա	42 (40 - 48)
11.- Պոլոնիա	41 (39 - 47)
12.- Էմփոլի	38 (36 - 46)
13.- Մոտենա	38 (30 - 48)
14.- Աթալանթա	38 (35 - 47)
15.- Ռեճինա	38 (38 - 53)
16.- Փիաչենցա	30 (44 - 62)
17.- Քոմո	24 (29 - 57)
18.- Թորինո	21 (23 - 58)

ՊՈՒՆՏԱԿԱ

ՊԱՅԷՐ ԼԵԻԵՐՔՈՒԶԸՆ ՄՆԱՑ Ա. ԴԱՍԱԿԱՐԳ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պոլն-տրալիկա) 34րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն, վտանգաւոր դիրքի վրայ դանդաղ Պայէր Լեւերքուզը 1-0 արդիւնքով յաղթանակ արձանագրելէ ետք, փրկուեցաւ Բ. դասակարգ փոխադրուելէ: Վերջին երեք դիրքերը գրաւող խումբերը՝ Արմինիա Պրիֆէլտ, Նիւրնբերգ եւ Քոթլուս փոխադրուեցան Բ. դասակարգ: Անոնց փոխարէն Ա. դասակարգ բարձրացան Յրայպուրկ, Քէօյն եւ Ալթինթալ Յրանքֆորթ:

Ախոյեան Պայէրն Միւնիխ եւ փոխ ախոյեան Շթուտգարթ յառաջիկայ եղանակին պիտի մասնակցին «Չէմփիօն» Լիգի ֆուտպոլի մրցաշարին, իսկ Յրայպուրկը գրաւող Պոլսիա Տորթմունտ՝ գտումի մրցաշարին: Եու. Է. Է. Բ. մրցաշարին պիտի մասնակցին՝ Համպուրկ, Հերթա Պրիւն եւ Քայզերսլաութըն, իսկ «Ինթերթիօ» մրցաշարին՝ Վերտըր Պրեմըն, Շալքէ եւ Վոլֆսպուրկ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՆԻԻ ԶԸՐԶԻ ՆԷԹՅ՝ ԱՐԵԻԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ

Իր կատարած չորրորդ մրցումին ալ Նիւ Զըրիկ Նեթց պարտութեան մատնելէ ետք Տիթոնիթ Փիսթընպը (102-82) հանդիսացաւ Արեւելեան շրջանի ախոյեան, 4-0 արդիւնքով յառաջանալով անոր վրայ:

Արեւմտեան շրջանին ախոյեանին անունը ցարդ չէ որոշուած, նկատի ունենալով որ Սան Անթոնիօ Սփրիդ - Տայաս Մալքըրիքս մրցումը այժմ կ'ընթանայ 3-1, ի նպաստ՝ Սփրիդի:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պորուսիա Տորթմունտ - Քոթլուս	1-1
Շթուրկարթ - Վոլֆսպուրկ	2-0
Շալքէ - Պայէրն Միլան	1-0
Պորուսիա Մեոնշընկլապախ - Վերտըր Պրեմըն	4-1
Արմինիա Պրիֆէլտ - Հանովըր 96	0-1
Համպուրկ - Հանգա Ռոսթրը	2-0
1860 Միլնիխ - Պոլսում	2-4
Նիւրնբերգ - Պայէր Լեւերքուզըն	0-1
Հերթա Պրիւն - Քայզերսլաութըն	2-0

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը:

1.- Պայէրն Միլան	23	6	5	75
2.- Շթուրկարթ	17	8	9	59
3.- Պորուսիա Տորթմունտ	15	13	6	58
4.- Համպուրկ	15	11	8	56
5.- Հերթա Պրիւն	16	6	12	54
6.- Վերտըր Պրեմըն	16	4	14	52
7.- Շալքէ	12	13	9	49
8.- Վոլֆսպուրկ	13	7	14	46
9.- Պոլսում	12	9	13	45
10.- 1860 Միլնիխ	12	9	13	45
11.- Հանովըր-96	12	7	15	43
12.- Պորուսիա Մեոնշընկլ	11	9	14	42
13.- Հանգա Ռոսթրը	18	8	15	41
14.- Քայզերսլաութըն	10	10	14	40
15.- Պայէր Լեւերքուզըն	11	7	16	40
16.- Արմինիա Պրիֆէլտ	8	12	14	36
17.- Նիւրնբերգ	8	6	20	30
18.- Քոթլուս	7	9	18	29

ԹԵՆԻՍ. ՈՒՆԱՆ ԿԱՐՈՍ

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՆՅԱԻ Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ ՖԵՏԵՐԷՐ՝ ԱՌԱՋԻՆ ՕՐՈՒԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ԶՈՂԸ

Յրանսայի թենիսի կրան շրջանի մրցաշարին՝ Ռոլան Կարոս, որ սկսաւ երէկ, աղջկանց մրցումներուն զուգահեռ Մարի - Գայիանէ Միքայէլեան սպահովեց Բ. հանգրուանին իր տոմարը 6-3, 4-6 եւ 7-5 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք իր մրցակիցը՝ Անճելիք Ուիտ-ժափան (Հնդկաստան):

Աղջկանց Ա. հանգրուանի մրցումներուն, յիշատակելի անակնկալներ տարձանագրուեցան եւ բոլոր մեծերն ալ սպահովեցին Բ. հանգրուանին իրենց տոմսերը: Տղոց մրցումներուն

մրցումներուն արդիւնքները:

ՏՂԱՔ

2.- Անտրի Ակաի (Մ. Ն.) - Քարոլ Պէք (Սլովակիա)	6-2, 6-3 եւ 6-3
11.- Ռայնըր Շուբլըր (Գերմանիա) - Սեսիլ Մամիթ (Մ. Ն.)	6-1, 2-6, 6-4 եւ 6-2
26.- Զաւիէ Մալիւե (Պոլնիա) - Ալեքս Քալարու (Սլովակիա)	7-5, 6-4 եւ 6-2
4.- Քարլոս Մոյա (Ալգերի) - Ֆիլիպո Վոլանտրի (Իտալիա)	7-6, 4-6, 6-2 եւ 6-3
17.- Եւգենի Քաֆելնի-	

քով (Ռուսիա) - Ժիլիէն Պուրէ (Ֆրանսա) 6-1, 6-2 եւ 6-4
23.- Եուգեն Այնաուի (Մարթ) - Անթոնի Տիւֆուի (Ֆրանսա) 6-4, 6-4 եւ 6-4
13.- Երիկ Նովաք (Չեխիա) - Ժիլիէն Պուրէ (Ֆրանսա) 6-2, 6-3 եւ 6-2
29.- Վեցսն Սփաուե (Մ. Ն.) - Իրալի Լապաթե (Վրաստան) 6-1, 3-6, 5-7, 6-4 եւ 6-1

ՍՂՊԻԿՆԵՐ

1.- Սերենա Ուիլիլմս (Մ. Ն.) - Պարպարա Ռիքըր (Գերմանիա)	6-2 եւ 6-1
--	------------

ԺԻՐՕ

ՃԻԼՊԵՐԹՕ ՍԻՍՈՆԻ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Իտալիոյ հեծելազակի շրջանակին (Ժիրօ) 16րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցաւ Երէկ Արքոյն Փաւրէ (207 քմ.), վերջ գտաւ իտալացի հեծելազակ Ալեսանտրօ Ֆեթաբի (Ֆասսա Պորթո) յաղթանակով (4 ժամ 39' 34"), որ այսպիսով այս շրջանակին ընթացքին շահեցաւ իր հինգերորդ տիտղոսը:

Կիրակի օրուան ժամացոյցի դէմ անհաստակ մրցումին, Մերսուլի Պոլանո (42,5 քմ.), Փեթաբի, որ արկած մը ունենալով փոխադրուեցաւ հիւանդանոց, արդէն իսկ յաջորդ օրը հանգրուան մը շահեցաւ:

Ժամացոյցի դէմ այդ մրցումը շահեցաւ սպանացի Ալթոր Կոնգլէս (Ֆասսա Պորթո), որ արձանագրեց 54' 33" արդիւնք մը:

Շաբաթ օրուան 14րդ հանգրուանի մրցումը՝ Մարտիա Քալիսի (Սիլի) Ֆամփէակո (162 քմ.) շահած Սայքոյի իտալացի հեծելազակ Ճիլպըթօ Միմոնի (4 ժամ 46' 43") այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը (71 ժամ 21' 28"), 1' 58" առաւելութեամբ ունենալով իտալացի Շեթֆանօ Կարօնիլի վրայ: Այսօր՝ Երեքշաբթի հանգիստի օր է:

